

ՌՈՒԲԵՆ ՂԱԶԻԿԵԱՆ

ՃԻՉԵՐ ՈՒ ՃԻԳԵՐ



Գեղ. Տպ. Խ. ՄԱԹԻԿԵԱՆ

ՓԱՐԻԶ

1936

891.99

Ղ-17

19 JUN 2013

40631

Գաղափարի համապատասխանություն
 ձև. Դ. Գաղափարի:
 16 հունիս 1936
 Արամիս Էմ
 Կարս

Ք. Ղազարյան

NOV 2011

391.29

ՅԱՌԱՋԱԲԱՆ

12-17 ա




3114

39

(4036)

(6957)



Մեծ հաճությամբ կը ներկայացնեմ ընթերցասէր հասարակութեան իմ վաղեմի բարեկամ եւ հայրենակից Ռ. Ղազարյանի «Ճիշդեր ու ձիւղեր» խորագիրը կրող այս փոքրիկ գլուխը, ուր ամփոփած է ան գերազանցապէս մարդկային ըզզացումներով ղեկուն այնքան ինքնուրոյն, որքան սիրուն ու թր ոտանաւորներ ինքնագիր՝ եւ չորս ընտիր թարգմանածոյ կտորներ:

Կարենալ լաւ թափանցելու համար անոնց խորքին՝ օգտակար է հարեւանցի ակնարկ մը ձգել հեղինակի կեանքի վերայ:

Ռ. Ղազարյան, բնիկ արեւելիցի՝ փոքր հասակէն կ'ուզարկուի Կարին, Սանասարեան վարժարանի մէջ երկրորդական ուսում ստանալու համար. այս հաստատութեան ընթացքն աւարտելէ յետոյ, ան կ'ընդգրկէ ուսուցչական ապարէզը: Ժամանակ մը ընդմիջարար, կը վարէ առեւտրական պաշտօն: Իզմիրի մէջ, ուր կ'անցընէ իր կեանքին մէկ կարեւոր մասը՝ կը հիմնէ, կը վարէ եւ սկիզբները՝ «Միմոս» երգիծաթերթը, անխնայ խարանդով յետամնաց տարրերն ու բարքերը: Ան կը հանդիմանայ գլխաւոր նախաձեռնողներէն մին տեղւոյն «Հայ Առեւտրական Պաշտօնէից Միութեան»

(սէնտիքա) կազմութեան: Նաեւ եռանդուն ջատագով զմիւս-
նահայ Ուսուցչական Միութեան՝ կը մշակէ «Ուսուցչական
Ապահովութեան Սնտուկ»-ի մը ծրագիրը եւ համարո՞ւս պաշ-
տօնակիցներու գործակցութեամբ, անվհատ՝ կը ձգտի մար-
մին տալ անոր:

Մղուած իր խիղախ նկարագրէն՝ իր հետաքրքիր միտքը
գոհացնելու նպատակով, Ռ. Ղազիկեան կ'անցնի արտասահ-
ման, կ'այցելէ բազմաթիւ կեդրոններ չորս ցամաքամասերու
վրայ: Ի վերջոյ կանգ կ'առնէ Փարիզ, ուր կը հետեւի իրա-
ւաբանական վարժարանի ընթացքին, կը լրացնէ ան ու կը
ստանայ իրաւագէտի տիտղոս: (Լիսանսիէ ան տրուա): Եւ
սակայն, քաղաքական դահալէժ դէպքերու բերումով՝ հա-
կառակ իր բուն բաղձանքին, առիթը կը վերադի իր պատկա-
նած ժողովուրդին ծոցը վերադառնալու:

Յաճախ հեշտ չըլլար իր կեանքի պայքարը, բայց սոտ-
յիկօրէն կը դիմադրաւ ամէն դժուարութիւններու. կ'ապրի
միշտ մօտիկ ու ցաւակից հոծ զանգուածներու, ամէն առ-
թիւն կը ջանայ արթնցնել անոնց գիտակցութիւնն ու հրահր-
բել անոնց պայքարի եռանդը: ՀՕԿ-ի եւ Արաբկիրի Միու-
թեան մնացուն եւ գործօն անդամակցութիւն բերելէ զատ,
ջերմ խրախուսող մը կ'ըլլայ ամէն իսկօրէն ժողորդական
չարժումներուն եւ վերաշինական ձեռնարկներուն:

Ղազիկեանի գործը կը ներկայանայ ընդհանրապէս իբր
բողոքի ձիւ մը աղաղակող անարդարութիւններու եւ ընդվզե-
ցուցիչ անհաւասարութիւններու դէմ եւ կորովի ճիգ մը՝
պայքարով անոնց յաղթահարելու եւ ընդմիշտ ձերբազատե-
լու համար:

Վերլուծենք այժմ այն՝ առանձինն, կարդանք «Եղա-
նակներն իմ կեանքին»ը, «Խորհրդային Հայաստանին»ը.
այս երկու ոտանաւորներուն մէջ ալ կուր կերպով խտացած

իր կեանքի ճշգրիտ պատկերը կը հայելիանայ. հակառակ
այնքան դառն յուսավրիպումներու՝ կը մնայ անխախտ եւ կը
դառնայ աւելի ուժգին անոր գիտակից հաւատքը, համոզու-
մը՝ լուսաւոր ու փառաւոր գալիքին համար:

Առնենք «Ըսէ՛ք ինծի»ն, «Պար եւ պայքար», «Ըսէ՛ք ի՞նչ
կ'ըլլանք»ը. ինչքա՞ն խոր ու անկեղծ թափանցում՝ աշխատա-
ւոր զանգուածներու հիւծիչ ու անճիտող տառապանքին. հոն
երեւոյժ արդար զայրոյթի պոռթկումը բացարձակապէս
ինքնաբուղի է: Շահեկան են եւ խորհրդային հայ-
րենիքի վերելքին նուիրուած տաղերը իրենց խանդավառիչ
չնչտերով: Մեծապէս ուշագրաւ է «Մըշիւնն ու ձալուը» իր
փոքր-քաղքենիական մտայնութիւնը գայթակղեցնող խոր-
քով եւ հաճելի ներկայացումով:

Գալով թարգմանածոյ կտորներուն, ընտրուած են ակն-
յայտնի հեղինակներէ: Անոնց հայացումին մէջ ան, լայնօրէն
յաջողած է իր սանասարեանցիի դրոշմը կրող գեղեցիկ ու ճը-
կուն ոճով:

Առ հասարակ ձեւի տեսակէտէն՝ Ղազիկեանի լեզուն ճոխ
է, յանգերը հարուստ են, զերծ՝ բռնադրօքիկ բառերէ: Շատ
դնահատելի է այժմէն արեւելեան բարբառը կիրարկելու իր
ձգտումը, որուն շուտով կը տիրէ, անշուշտ Հայաստանի
մէջ, ուր բարեբախտաբար միատեսակ բարբառ մը միայն
գործածելի է:

Մ. Ս. ԴԱԻԻԹ-ԲԷԿ

Փարիզ, 1936

Զ օ ն

Իմ բոլոր հայրենակիցներուն որոնք հիմնեցին
ու կը շինեն ՆՈՐ ԱՐԱԲԿԻՐը :

Ծովե՛ր անցայ եւ ման եկայ ես Ասիա ,
Նե՛նգ Եւրոպա , Ափրիկէն հէք , Ամերիկա :
Տասնեակ աշխարհ , յիսնե՛ակ քաղաք ես հիւր եղայ .
Տեսա՛յ հազար պալատ , տաճար , բիլդինգ հսկայ ,

Բեհե՛զ , բուրմունք , դանձ , աղամանդ , լեռ ճոխութիւն ,
Մեծապատիւ ծոյլ տէրերն ալ այդ ամենուն : —
Բայց եւ . . . տեսայ ծով տառապանքն հոծ խաւերուն ,
Ինչպէս անոնց խռովքը խո՛ր , գոչը գոռո՛ւն :

Այլ իմ փնտռած կենցաղն արդար , կեանքը ազատ
ես չգտայ եւ ոչ մէկ տեղ : Կարօտաշատ
Կ՛ուզեմ , ա՛րդ դալ քեզ Հայաստան , մա՛յր խանդակաթ ,
Անքակտ անդամ մեծ Միութեան ամրահաստատ :

Հարուստ չես դեռ , սակայն երէկ էիր թշուառ ,
Բայց , շնորհիւ նոր կարգերուն խորհրդավար ,
Եւ շնորհիւ մեր պիրկ կամքին՝ վաղն անպատճառ ,
Յո՛րս Հայաստան , դու կը դառնաս դրախտավայր :

«ՀՕԿ» Փարիզ , 1934 .

Ըսէ՛ք ինծի, տէ՞րն է հարուստ ազարակի,
 Որ ամէն օր, երբոր ծագի արեւն ոսկի,
 Կը ձեռնարկէ իսկոյն դործի,
 Ու քրտնաթոր յողնի, տքնի.

Թէ ոչ մշակն անոր գերի՝
 Միշտ կիսամերկ ու անօթի:

Ո՞վ իրաւունք ունի, ըսէք, ցորեն հացին,
 Ծոյլ տէ՞րն արտին, թէ ոչ դատող ժիր գիւղացին:

Ըսէ՛ք ինծի, միթէ տէ՞րն է հսկայ հանքին,
 Որ լուսօրով կ'իջնէ հորը խոր ու մթին,
 Եւ խարխափուն կը մխրճի
 Ու կը ճգնի ու կը տքնի,
 Դուրս հանելու գանձ պէսպիսի,
 Ածուխը ջերմ, պղինձ, ոսկի:

Ըսէք, ունի ո՞վ զարդ, ոսկի, կրակ՝ ցուրտին,
 Հանքատէ՞րը, թէ բանւորին զաւակն ու կին:

Ըսէ՛ք ինծի, գործարանին մէջ փոշով լի՝
 Գործատէ՞րը թէ բանւորը միշտ կ'աշխատի,
 Ու կը շինէ բաղմապիսի
 Մեքենաներ, կահ, կարասի,
 Հագուստ, կօշիկ մեղ պիտանի,
 Կառքեր չքեղ, հիւանալի՛:

Ըսէք, ի՞նչու բաժնետէրը կառքը նստի,
 Ու բանւորը ծակ կօշիկով միշտ պտըտի:

Ըսէ՛ք ինծի, նաւատէ՞րն է թէ նաւաստին՝
 Որ կուրծք տալով ցուրտին, բուքին ու փոթորկին,
 Կտրէ կ'անցնի ծովն ամէհի,
 Եւ կը բերէ սուղ ու յարգի
 Հակեր ծանր՝ նուրբ մետաքսի,
 Աղնիւ մետաղ եւ ծիրանի:

Ըսէ՛ք ինծի, նաւատէ՞րն է թէ նաւաստին՝
 Որ հոգն ունի միշտ ապրուստին ու հագուստին:

Ըսէ՛ք ինծի, ցնծուհի՞ն է, թէ կարուհին՝
 Որ օրն ի բուն կքած վրան մեքենային,
 Միշտ կարելով հանէ հոգին:
 Յաճախ քաղցած՝ խոհուն, լուին,
 Եւ երբեմն երգ մը բերնին՝
 Մեղմաղձիկ ու ցաւագին:

Ըսէ՛ք ինծի, կարուհի՞ն է, թէ ցնծուհին,
 Որ կը հագուի պերճ ու փարթամ՝ պէս շուշանին:

Ըսէ՛ք ինծի, ո՞վ հանքագործ եւ գիւղացի,
 Եւ դու բանւոր, բանւորուհի եւ նաւաստի.

Պիտի մնա՞ք լուռ տակաւին.
 Ե՞րբ պիտ' պոռաք դուք միասին՝
 Զեր տէրերու սեւ երեսին.
 « Բա՛ւ է քամէք դուք մեր արիւն,

Ալ չենք անսար, լաւ իմացէք, ձեր ոչ մէկին,
 Մենք կ'աշխատինք միշտ ամէնքս մեր ամէնքին:»

«Բանւոր», Նիւ-Եմբ, 1934.

Ո՛չ ճոխ ճաշը, ո՛չ գինին,
Ոչ ալ արծաթն ու ոսկին
Են նստատակը կեանքին.
Հասկա՝ հանգիստն ամէնքին:

Ով սոսկ խորհի իր մասին,
Անընտանի մ'է ինքնին.
Թէեւ ոչինչ էս ունիմ,
Կը նկատեմ աշխարհն իմ:

Դիտենք պահ մը մենք անդին՝
Հայաստանը վերածին,
Ուր ամէնքը կ'աշխատին,
Այր, պատանի, աղջիկ, կին՝

Ո՛չ իշխանի մը կամքին,
Ոչ ալ իրենց քսակին՝
Այլ բովանդակ մեր երկրին
Կառուցումին՝ վերելքին:

Նշանաբան միշտ ունին.
« Իւրաքանչիւրն ամէնքին »:
Ստեղծագործ բանւորին
Կուտան յարգանք վարձագին:

Մենք ալ վերջ տանք սին խօսքին,
Ձօնենք առա՛տ մեր ոսկին,
Որ աւելնայ յարգն ու գին
Մեր Նայիրեան մե՛ծ փառքին:

«Կայծեր» Լիւն 1934.

Ժիր բանւորներ, բազկի, մտքի, իմ քոյ՛ր, եղբա՛յր,
Ողջո՛յն կ'ուղղեմ ձեզ սիրազեղ եւ բոցավառ,
Կը մաղթեմ էս խինդ ու ժպիտ շա՛տ, անհամա՛ր,
Կը բաղձամ ձեզ հաճոյք անխառն, վա՛յելք անճա՛ռ:

Իրաւունքն է այս՛, այդ ձեր, որ անդադար
Տքնիք, յողնիք շարաթն ամբողջ՝ լուռ ու խոնարհ,
Մինչ յղիանայ բաթրոնն անյազ, անսիրտ ու չար,
Որ կը խորհի լոկ ձեզ զրկել, պահել թշուառ:

Զգալ միայն այդ պարագան չէ բաւարար,
Պէտք է բառնալ բողոք, դանգառ բարձրաբարբառ,
Պէ՛տք է պոռալ որ արթննայ աշխարհ արար,
Թափ տայ թեւերն, փչրէ չղթան ստրկարար:

Այսօր ուրա՛խ երգենք, հրճուինք ու բռնենք պար.
Աշխատանք կայ վաղն ապերախտ ու չարաչար.
Վաղը մենք կուռ պիտի մղենք կռիւ, պայքար,
Բանւորական դատին համար սուրբ եւ արդար:

Մենք կուռի մէջ գիտնանք ըլլալ անվախ, յամառ.
Յաղթանակը պիտի ըլլայ մե՛րն անպատճառ.
Կ'ապրի ընդ միշտ մեռնողը այս դատին համար.
Մահը՝ կեանք է, եթէ մարդ զայն չանգիտանար:

Ահա Էնդելտ, Մարքս եւ Լենին մեծահանճա՛ր,
Որոնք անմեռ կ'ապրին այսօր եւ դարէ՛ դա՛ր:
Միառնիկեան եւ Շահումեան զոյգ աստղ պայծառ՝
Հայ երկնքին՝ պիտի փայլին յաւերժաբար:

Այսօր պարենք, այսօր կայթռենք մենք խանդավառ՝
Վաղը դարձեալ մենք ձեռք կ'առնենք դործը դժուար .
Ո՛չ, մեր կռիւն ու պատերազմ մենք չենք մոռնար . .
Մենք կը յաղթենք . մէկի դէմ ենք բաղմահաղա՛ր :

ՄԻԱՑԵԱԼ ԵՒ ՈՉ ԱՆԿԱԽ

Մոմը վտիտ՝ մինակն աղօ՛տ կը պլպլայ,
Մինչ լուսաչող ջահին առջեւ բաղմաստեղեայ՝
Խաւարը կոյր՝ դողդղալով կը հեռանայ :

Ծաղիկ մը լուկ, որքան ալ որ աղւոր քլլայ,
Փռնջի մը պերճ ո՛չ հրապոյրը կ'ոճնենայ,
Ոչ ալ անոր համայնասփիւռ բոյրն անխնայ :

Արար աշխարհ շատ լաւ դիտէ, կասկած չկայ,
Մարդարիտի մ'արժէքը միշտ կը բարձրանայ,
Երբ հոյակապ մանեակի մը մաս կազմէ նա :

Եթէ կրնաք պատասխանել ձեզ հարց մ'ահա .
Գիտէ՞ք արդեօք, թէ առանձին երանդ մը կա՞յ,
Որ երփնագեղ ծիածանին պատկերը տայ :

Յաղթ, վեհապանծ Միութենէն ինչո՞ւ հապա
Նայելիի երկիրն ընտրէ անկախ ճամբայ .
Խորհողն այսպէս, լսէ՛ք, միթէ չէ՞ երեխայ :

«Զանգու», Փաքիզ, 1935.

ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ԻՄ ԿԵԱՆՔԻՆ

Իմ կեանքի դարնան ողջ օրերն անցան
Դաժան, թախծալից՝ ճիշդ աշնան նման .
Փչեցին անդուլ քամին ու խորչակ .
Սոսկ սարսո՛ւռ զգաց իմ հոգիս համակ :

Իմ ամառն եղաւ ձմրան պէս լալկան .
Արցունքի գետեր, հեղեղներ արեան,
Սով, գաղթ, կոտորած եւ համաճարակ
Մեր երկիրն ըրին մոխի՛ր, աւերա՛կ :

Արդ, սեմին վրայ ես՝ բուն իմ աշնան՝
Կ'ապրիմ գո՛հ, զուարթ դարունս իսկական .
Ձէ՞ որ Մասիսի ճակտին սպիտակ՝
Կը փայլին բոսոր արեւն ու դրօշակ :

Իմ ձմրան դալիք օրերը կը զգամ
Անդորր՝ այժմէն իսկ : Զերմուրախ անդամ .
Զի սերունդ մ'առոյգ նետած է հասակ,
Եւ «կարմիր բանակ»ն անյաղթ է հիմակ :

Ըսէ՛ք, ի՞նչ Կ'ԸԼԼԱՅ
Մասնիկն անջատուած աստղէն հրավառ,
Ասուղի ձեռով երբ որ Կ'իյնայ վար:
Չէ՞, Կ'անհետանայ:

Ըսէ՛ք, ի՞նչ Կ'ԸԼԼԱՅ
Փունջէն իր պոկուած ծաղիկը սիրուն,
Եղած խաղալիք անգուլթ հովերուն:
Չէ՞, Կը փճանայ:

Ըսէ՛ք, ի՞նչ Կ'ԸԼԼԱՅ
Խուրձէն դուրս թափած հասկը աղաղուն
Եւ դարձած կոխան՝ ոտքին ամէնուն:
Չէ՞, Կ'ոչնչանայ:

Ըսէ՛ք, ի՞նչ Կ'ԸԼԼԱՅ
Պաշարի ելած մեղուն ժրաջան՝
Երբ կորսնցընէ փեթակին ճամբան:
Չէ՞, Կը չքանայ:

Ըսէ՛ք, ի՞նչ Կ'ԸԼԼԱՅ
Հայ բանւորն հեռու Նալիբի երկրէն,
Տէրերու ձեռքին օտար, անօրէն:
Դո՛ւք ըսէք հիմա:

Քաղքենի մը հարց կուտայ ինձ. «Ունի՞ս եւ դուն
Ոսկի՞ հնչուն, կառք փառաւոր, պարտէզ եւ տուն»:
— Այդ ամէնը չե՛ն արդիւնքը քու ճիւղերուն,
Այլ՝ ընչադուրկ բանւորներուն քրտնաղեղուն:

Եկուր ուղղենք ակնարկը մեր՝ պահ մը հեռուն,
Ճոխ գանձերը Նայիրիի ողջ հանքերուն,
Ըսէ՛ նայիմ, գիտե՞ս արդեօք, թէ ո՞ւմն են ո՞ւմ,
Քուկդ չեն այլ, բանւորներուն ժիր ու տոկուն:

Թոյլ կուտա՞ս ինձ ուղղել քեզի եւ այլ հարցում.
Շարքերն երկար Հայաստանի դնացքներուն,
Կառքերն հազար կը պատկանին գիտե՞ս որուն.
— Ոչ քեզի՝ այլ, ստեղծագործ բանւորներուն:

Հասկա բերրի արարատեան դաշտը անհուն,
Կենսատու հացն ու գինին եւ Ղըռսերուն
Բամպա՞կը տաք, գործարաննե՞ր, բանֆա՛կ, ժպտուն,
Թատրո՞ն, կինո՞ քուկդ չեն, այլ մեր ամէնուն:

«ՀՕԿ» Փարիզ, 1935.

ՃՊՈՒՌՆ ՈՒ ՄՐՋԻՒՆԸ

Մի հնամեայ ծառի ծոցում,
Որպէս դրկից էին ապրում
Երգիչ ձպուռն ինքնապատահ,
Եւ ընչամոլ Մըջիւնն ագահ : ?

Սա ցոյց տալով իւր դրացուն,
Ասում էր միշտ թոյնով լեցուն .
« Ընչադուրի է , մի անպիտան .
« Աչք է տնկել դանձիւ վրան :

« Սակայն բնաւ ես վախ չունեմ .
« Ոստիկաններ թող ո'ղջ լինեն :
« Վա'յ թէ դիպի իմ մի ինչքին ,
« Նա զոհ կը տայ իր դարչ հոգին : »


Եւ համրում էր գիշեր ու տիւ ,
Իւր սլաշարի դէզերն անթիւ :
Ասում էր . « Դեռ պէ'տք է շարժիմ ,
Որ ձպուռին չընկնի բաժին : »

Ու դատեցաւ միշտ խօլագին ,
Մինչեւ ընկաւ նա անկողին :
Մարմինն ամբողջ դողդոջում էր
Եւ արձակում՝ սուր սուր ճիչեր :

Բժիշկ ու դեղ , աւետարան ,
Չէ' , չբերին ո'չ մի դարման :
« Զղային է , ասին ոմանք ,
Երգը կը տայ մեծ սիրտանք : »

Ու վաղեցին ձպուռին մօտ ,
Որ վաստակից վերջ եռանդոտ ,
Հանգչում էր զոհ եւ հեշտագին ,
Փառքն էր երգում սիրոյ կէանքին :

Մտիկ տուաւ ձպուռն անխոյթ ,
Ապա յարեց նա ժպտաշուրթ .
« Անօգո'ւտ է , զուարթ երգն իմ
« Դեղ չի լինի ընչաքաղցին : »



RIMES MOYENAGEUSES

(inedit)

Quand la neige, de ses flocons miraculeux
Pailletera la traîne immense de l'Année,
D'une aile, survolant les méditerranées,
J'irai chercher la gloire au Pays-fabuleux.

Tu m'attendras dans ton palais de cristal-bleu,
Emmi le blanc sommeil des tulipes fanées,
Princesse de romance aux grâces surannées,
Avec des strophes de parfum dans tes yeux!

Un soir de lamento frigide, la bourrasque
Symphonique essorant les ailes de mon casque,
Je reviendrai sur mon superbe palfroi,

Et très chaste, mimant l'éternelle mimique,
T'offrirai nu, parmi les trésors pris aux rois,
Mon corps vierge, pétri de neige balsamique.

K. KÉLÉKIAN

ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՅԱՆԳԵՐ

Ձիւնն երբ պճնէ, իր սխրալի բաթիկներով,
Ամանորի կառախումբը երկայնածիւ,
Պիտի դամ ես ծովերն անհուն սաւառներով,
Փառք որոնել Աշխարհում այդ առասպելիկ:


Պալատումը քո լուրթ-բիւրեղ ինձ սպասի
Անքուն՝ ինչպէս կակաչները թարչամագեղ,
Վիպապատում եւ հնագեղ իշխանուհի,
Ծաւի աչքիդ ցայտիւններով բուրումնաղեղ:

Յրտասարսուռ մի երեկոյ անդոհական՝
Սաղաւարտիս թեւերն ուռած բուքից դաշներդ
Չնաշխարհիկ երիվարովս քեզ պիտի դամ,

Եւ անմեղուկ կերպարանքովս յաւերժական,
Արքայածիր դանձերիդ մէջ պիտ' ձօնեմ մերկ՝
Ձիւնաթաթախ մարմինս կոյս խնկածորան:

(Փոխադրեց Ռ. Ղազիկեան՝ Գ. Գելէկեանէ)

(4036)
3114 39



Իրիկնամուտ է, ստուեր պատել է
Արդ Բրողվէյի ամբողջ երկայնքին.
Հեղանաղ քայլերով ահա ճեմում է
Սիգապանծ, մենակ՝ զեղանի մի կին:

Անտես ոգիներ սիրազեղ սրտով,
Հետեւում են լուռ՝ իրա քայլերին:

Երբ նա քայլում է, օդը հրճւում է,
Եւ խաղաղութիւնն աշխարհին տիրում:
Հիացմամբ զեղուն անցորդներն ամէն՝
Կոչում են նրան ազնիւ ու սիրուն:
Նա իւր մարմնական ձիւրքերն երկնատուր՝
Մեծ հոգածութեամբ պահում է, թաքցնում:

Գեղեցկութիւնն իւր դիւթիչ, անստգիւտ,
Զլացաւ ցվերջ վառ, անկեղծ սիրոյն:
Ոսկի՛, ճոխութիւն՝ երազեց միայն.
Թէեւ չփութաց փարթամ թեկնածուն,
Բայց ինչ փոյթ իրան՝ քահանան-միջնորդ՝
Շուտափոյթ գտաւ զնորդ-փեսացուն:

Այժմ իբր հարս՝ առաւել գողտրիկ՝
Ասես լոյս-չուշան դարձեալ է՝ անցնում,
Մինչ աներեւոյթ սիրող ոգիներ
Հետեւում են դեռ տխուր եւ նկո՛ւն:
Անյաղ տենչանքի, արհամարհանքի
Միջով զնում է եւ ... անդարձ կորչում:

Ողորմմն այլեւս չանդորրի աշխարհ,
Ոչ էլ աղօթքը կը քաւի մեղքն իր.
Զը լսեց սիրոյ՝ ... կանացիաբար
Ծախելով սիրտն իր ... գործեց մեծ ոճի՛ր:
Թէկուզ երկինք տայ իրա թողութիւն,
Սակայն ոչ երբե՛ք չի ների երկիր:

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԲԱՆԱԴ

Դրել եմ մատիս մատանի ահա,
Եւ շքեղ պսակ ճակատիս վրայ:
Բեհեղ ու սնդուս ունեմ այնքա՛ն չա՛տ,
Նաեւ թանկարժէք ակեր ճոխառատ:
Զգում եմ ես ինձ երջանիկ հիմա:

Սիրում է տէրս ինձ սիրով ջերմիկ,
Բայց սէրն առաջին արտայայտելիս՝
Կարծես մահազանդ հնչեց ականջիս,
Եւ ընդոստ ցնցուեց իմ ամբողջ հոգիս.
Ինձ այնպէս թուեց, թէ նրա ձայնն էր,
Որ զրոհ տալիս՝ ընկաւ անվեհեր,
Եւ արդ հանդչում է հովտում . . . երջանիկ:

Ճակատիս գունատ դրոշմեց համբոյր,
Շուայլեց թէեւ հաւաստիք ինձ բի՛ւր,
Սակայն իմ հոգին, ինչպէս անըջում,
Սլացաւ զէպի գերեզմանատո՛ւն.
Խո՛ր կարեկցելով իմ տիրոջ այժմի
Կորած էլորմիս յիշեցի էլի.
Զգում եմ ես ինձ երջանիկ հիմի:

Այսպիսով ահա, եւ նոյն ա'յս պահում,
 Փոխանակուեցին մեր խօսքն ու խոստում:
 Սիրազո՞ւրկ խալառ, յուսաբեկ արդէն,
 Եւ սակայն դարձեալ հաւատարմօրէն
 Իմ խօսքը ոսկի ես միշտ եմ յարգում,
 Ու ես ինձ հիմա երջանի՛կ զգում:

Երանի՛՜ Տէրը տայ ինձ սիրովում.
 Ձգիտեմ՝ այսպէս ի՛նչ եմ երազում:
 Թախծոտ է հոգիս ու յուզումնալի
 Երկիւղից լոկ այն, որ վատ գործ արի.
 Սիրածիս մեռած միայնակ թողի.
 Գուցէ չլինի երջանիկ հիմի:

Edgare Allen Poë

✓ ՀԵԾԵԾԱՆՔԻ ԿԱՄՈՒՐՁԸ

Bridge of Sighs

Վերջին ծայր թշուառ,
 Յողնած, ուժասպառ՝
 Մի դժբախտուհի
 Դիմել է մահի ...

Վերցրէք սիրով,
 Անհուն գորովով ...
 Մատղա՛շ, քնքշիրա՛ն,
 Գողտրիկ է այնքա՛ն . . . :

Ինչպէս ցուրտ պատանք,
 Մարմինն իւր պրկող
 Հագուստից խխում
 Դեռ ջուր է ծորում:
 Վերցրէք սիրով
 Եւ ո՛չ խորշումով:

Հպէք փափկութեամբ.
 Յիշեցէ՛ք նրան
 Տխո՛ւր, թախծօրէն,
 Եւ մարդկայնօրէն.
 Մոռացէ՛ք հիմա
 Սայթաքումն իրա.
 Կնարար ահա
 Անարատ է նա:

Մի՛ պրպտէք խոր,
 Ընդվզումն իրա
 Խօլ ու յանցաւոր.
 Մահը բարձել է
 Ողջ անպատուութիւնն
 Եւ թողել միայն
 Լոկ գեղեցկութիւն:

Մինչ գետի ծոցում
 Փարոսն էր ցոլում,
 Եւ լոյսն ուղխօրէն
 Շողում, շողշողում՝
 Յարկերից ամէն,
 Նա էր շուարուն,
 Գիշերում անտո՛ւն:

Մարտի սառ քամին
 Դող աղղեց մարմնին,
 Սակայն ո՛չ երբեք,
 Կամարը մթին,
 Ալիքը ցրտին:
 Անցեալն վերջիչեց,
 Մահը գերընտրեց.
 Տենչաց անձկալից
 Խոյս տալ աշխարհից . . . :

Եւ անվախ՝ ցրտից,
Յորդ գետի ափից
Գլորուեց իսկոյն
Ալիքի ծոցում . . . :
Մա՛րդ հաճոյասէր՝
Երեւակայի՛ր,
Եւ սուղուիլ փորձիր,
Կամ մի ումպ խմիր :

Սեռին ներյատուկ
Սայթաքում է սա .
Մեղ լուե՛լ պէտք է :
Սրբեցէք փափուկ
Շրթներն իր տաժուկ,
Շտկեցէք իսկոյն
Ծամերի խօիւ,
Սեւ հիւսքը սիրուն :

Մինչ ամէնքն հարցնում .
« Ո՞ւր է իրա տուն ,
« Ո՞վ է նրա հայր ,
« Ո՞վ է նրա մայր ,
« Ո՞ւնի նա մի քոյր ,
« Ո՞ւնի նա եղբայր ,
« Կամ ալ մերձաւոր՝
« Որին դեռ սիրի
« Քան սրանց բոլոր . . . :

Աւա՛ղ ի՛նչ հեգնանք՝
Քրիստոնէութեան . . .

Լինել խեղճ այսքան .
Ապրիլ քաղաքում
Այսպէս բազմատուն՝
Չունենալ մի բոյն . . . :

Փոխուել էր հօր , մօր ,
Քրոջ եւ եղբօր՝
Չգացումը վառ .
Գլխիցն անպատճառ
ցնդել սէրն իսպառ՝
Կարծես թէ եւ Տէրն
Իրեն լքել էր :

Վերցրէք մեղմով ,
Անհուն գորովով ,
Մատղա՛շ , նրբակա՛ղմ ,
Գողտրիկ է այնքա՛ն :
Չգո՛յշ , փափկօրէն ,
Անդամներն ամէն
Մօտ բերէք միմեանց ,
Քանի սառած չեն :
Փակեցէ՛ք կամաց
Լախալիւր բացուած
Աչերն իր անլո՛յս . . . :

Տղմուտ , ահազղու՛
Ինչպէս անյոյսի
Ակնարկը յետին
Սեւեռած՝ մթին
Իւր ապագային :

Ձոհ՝ թշնամանքի
Սառ տմարդութեան ,
Խօլ ու տխրադին՝
Փաբեցաւ մահին . . . :

Հանգչում է նա արդ ,
Անդգայ՝ հանդարտ :
Ձեռներն իւր մեղմիկ ,
Խաչակնքեցէք

Իւր կրծքի վերայ ,
Որպէս թէ լռիկ
Աղօթում է նա . . .
Եւ խոստովանում
Մեղքերը իրա ,
Ընթացքն անուղղայ ,
Եւ Փրկչից խնդրում՝
Թողութիւն , ներո՛ւմ :

Thomas Hood



ՀՀ Ազգային գրադարան



NL0359136

40631

1p

28.1

.....
ԳԻՆ 2 ՅՐԱՆԻ
.....